

Դիզայն առարկան նկարիչ-մանկավարժի համալսարանական կրթության համակարգում

Մելիքսեթյան Գոռ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-284>

Հանգուցային բառեր. գեղարվեստական կրթություն, մասնագիտական, միջառարկայական, կրթական ծրագրեր, էրգոնոմիկա, համակարգչային դիզայն, հորինվածք մեթոդիկա, ուսումնասիրություններ, մանկավարժական

Նախաբան

Դիզայնի արվեստական կրթությունը՝ որպես գեղարվեստական կրթության անբաժանելի բաղադրամաս, արդեն XX դարասկզբից գոյություն ունի և ժամանակին զուգընթաց առավել ցայտուն է դրսևորում իր գործնական կարևորության աստիճանը մասնագիտական լիարժեք պատրաստվածության համակարգում՝ կախված մասնագիտական արդի պայմաններից համապատասխան պատրաստվածություն հաղորդելու սկզբունքայնությունից:

Հաշվի առնելով առարկայի մասսայական պահանջարկը, հասարակական տարբեր շերտերի կողմից ցուցաբերվող հետաքրքրությունն այս մասնագիտության նկատմամբ և արտադրական հարաբերություններում նրա կարևորությունը՝ պետք է նշել, որ առարկայի դասավանդման եղանակները, մեթոդներն ու բովանդակությունը ենթակա են անընդմեջ ձևափոխման և կատարելագործման, իսկ նկարիչ-մանկավարժների մասնագիտական պատրաստվածության համակարգում՝ այդ փոփոխությունները նպատակային, արագ և արդյունավետ կիրառելուն:

Պատահական չէ, որ գեղարվեստագիտական կրթության համակարգում դիզայնը, կամ, ինչպես նախկինում տարածված էր կոչել, գեղարվեստական ձևավորումը, թերևս միջառարկայական կապեր ունեցող ամենակտիվ կրթական առարկան է և, որոշ առումներով, ելնելով ստեղծագործական գիտելիքների լայն կիրառման հնարավորությունից, այն հանրագիտական է, որտեղ արտացոլվում են ոչ միայն ուսանողի ստեղծագործական հնարավորությունների մակարդակը, այլև նրա աշխարհայացքն ու գեղարվեստական կարողությունների ընդհանուր պաշարը:

Նպատակը

Բացահայտել սովորողների դիզայնի արվեստական կարողության զարգացման գործընթացում առկա բացերը (թերացումները) և մշակել դրանց հաղթահարման ուղիներն ու եղանակները:

Մշակել և ուսուցման գործընթաց ներդնել այնպիսի մեթոդական խնդիրներ, որոնք կնպաստեն ապագա նկարիչ-մանկավարժի նախագծային կարողությունների մակարդակի բարձրացմանը, գեղարվեստաստեղծագործական կարողությունների մակարդակի զարգացմանը:

Նորույթը

Ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում սահմանել մանկավարժական դիզայնի ուսուցման սկզբունքներն ու տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունները, մշակել «դիզայնի» պարապմունքների կազմակերպման և իրացման արդյունավետ եղանակներ՝ գեղարվեստական նախագծումներ և տարաչափ մոդելավորումներ:

Տեսական նշանակությունը: Մշակվել են գեղարվեստական կրթության ֆակուլտետում

դիզայն առարկայի տեսագործնական ուսուցման մանկավարժական մեթոդական մոտեցումներ, որոնք կհարստացնեն գեղարվեստական կրթությունը տեսական, մեթոդաբանական և մեթոդական նոր դրույթներով:

Գործնական նշանակությունը: Կարող են օգտագործվել դասախոսների և ուսուցիչների գեղարվեստական նախագծման և նրանց մասնագիտական իրազեկությունների մակարդակի բարձրացման ուղղված վերապատրաստումների գործընթացում:

Ուսումնասիրելով գեղարվեստական կրթության ֆակուլտետում դասավանդող ուսումնական առարկաների ցանկը՝ կարելի է եզրակացնել, որ այն բավարար է սովորողի մոտ լիարժեք և համակողմանի մասնագիտական պատրաստվածություն ձևավորելու համար, սակայն էթե այն համադրենք նաև բուհից դուրս առկա առևտրատնտեսական զարգացումներից բխող վերտիկալ մասնագիտության պահանջարկի հետ, ապա, ցավոք, պետք է նշենք, որ թերևս այն շտկումների և լավարկման կարիք ունի:

Կրթական ծրագրերում ամենևին չառաջացնելով կտրուկ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն՝ առաջարկում ենք ուղղակի կարճատև ուսումնասիրություն կատարել հասարակական պահանջարկ վայելող այս առարկայի դասավանդման ծրագրերի նկատմամբ՝ բացերը հնարավորինս նվազեցնելու նպատակով: Ամենևին գաղտնիք չէ, որ գլոբալիզացմանը զուգընթաց սրդի դարաշրջանում արտադրական հարաբերություններում ավելի ու ավելի տարածում է ստանում որոշակի համաշխարհային չափանիշների կիրառումը, որը հնարավորություն է ստեղծում արտադրողի համար սեփական արտադրանքը ավելի լայնածավալ կիրառմանը ուղղելուն: Ահա ինչու արտադրանքի գեղագիտական տեսքն ու էրգոնոմիկական հատկանիշները առավելագույնս պահպանելու գործոնը համարվում է առաջնակարգ:

Գեղագիտական առնչության ձևավորվածության մակարդակի ցուցանիշների բացահայտման ընթացքը մենք պայմանավորում ենք Ա. Վ. Մոտորինի ընդգծումով «...որ իր գլխավոր հատկանիշը օբյեկտիվ զգայական գնահատման և գեղագիտական իմաստավորման, զգայական-ներդաշնակ վերլուծության, գույնի և ոճի լավ զգացողության ընդունակությունն է» [1, 28]:

Այսօր ցանկացած իր, սկսած լոգոտիպիայից մինչև տիեզերանավ, իր գեղարվեստագեղագիտական լուծումներով ամբողջովին ենթարկվում է դիզայնի երկար «մշակման» երբեմն ունենալով գրաֆիկական արվեստին հարիր կատարյալ լուծումներ՝ ձևի և բովանդակության միասնությամբ: Ըստ Ս. Բ. Սերովի՝ «Գրաֆիկական դիզայնը միշտ գտնվել է նախագծային մշակույթի առաջնագծում» [4, 23]:

Հաշվի առնելով վերտիկալը՝ նշենք, որ մեր կարծիքով գոյություն ունեցող բազմաթիվ փաստարկներից միայն սա էլ արդեն հրամայական է առաջացնում գեղարվեստական ուղղվածություն ունեցող «Իզայն» առարկայի դասավանդմանը ավելի հիմնավոր մանկավարժական մոտեցումներ ցուցաբերելու փաստով: Չէ՞ որ սկսած պարզագույն մանկական ցանկությունից, վերջացրած մանկավարժի պիտանելիության չափանիշներից, դիզայնը այսօր գեղարվեստական առարկայախմբից ամենամեծ հետաքրքրություններ ու պահանջմունքներ է պարունակում, որն ամբողջովին հիմնված է տեսական, գործնական գիտելիքների ինտեգրվածության վրա:

Ուսումնասիրելով գեղարվեստական կրթության ֆակուլտետում առարկայի դասավանդման մեթոդները՝ պետք է նշել, որ այն հանդես է գալիս նյութական ապահովվածության ոչ լիարժեք մակարդակով, մասնավորապես՝ համակարգիչների և դրանց ծրագրերի բացակայությամբ, որը անհամապատասխանություն է ստեղծում մասնագետ ունենալու շուկայական հարաբերությունների և թողարկվող մասնագետի պատրաստվածության մեջ: Ավելին՝ մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շատ ու շատ դասավանդող մասնա-

գետներ ոչ միայն չեն ընկալում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական համակարգում, այլ ավելին՝ բացարձակապես անտեղյակ են նմանատիպ հասկացության հնարավորությունից: Թերևս խնդիրը լուրջ ուսումնասիրման կարիք ունի: Ե. Տ. Ռոմանիչևը և Օ. Գ. Յացյուկը գտնում են, որ «Դիզայն եզրույթը նշանակում է նախագծել, գծագրել, մտահղանալ, ինչպես նաև՝ նախագիծ, գծանկար, որով նշվում են առարկայական աշխարհի նախագծման նոր եղանակները» [3, 18]: «Համակարգչի վրա գեղարվեստական ստեղծագործության պարապմունքների ոլորտում էլ հենց առաջանում են հնարավորություններ ինքնահաստատվելու համար»: Պ.Մ. Յակոբսոնը գեղագիտական զգացմունքները հասկանում է «այնպիսի արձագանք գեղագիտական օբյեկտին, որը անպայման բնորոշվում է ապրումներով» [5, 186]:

Դիզայներական արժեքների «Մատուցման արդի միջոցները նկատելիորեն տարբերվում են նախկին ավանդականներից, և այստեղ գլխավոր ուղղորդիչը համակարգչային հնարավորություններն են»: Յուրաքանչյուր օբյեկտի վրա գունային, տոնային, հորինվածքային զանազան փոփոխությունների ներառումը նույնիսկ ոչ մասնագետին հնարավորություն է տալիս անմիջապես ընկալելու այնպիսի խնդիրներ, որոնք նախկինում պահանջում էին բազմամյա մասնագիտական փորձ:

Հետևություն անելով սավաճից՝ կարելի է նշել, որ դիզայնում հորինվածքի դասավանդման գլխավոր խնդիրներից մեկը գրաֆիկական լուծումներն են: Դիզայները պարզապես օգտագործում է պատրաստի գրաֆիկական ձևեր՝ ընտրելով դրանք լուծվող կոմպոզիցիոն առաջադրանքին համապատասխան:

Հաջորդ խնդիրը տոնային և գունային հարաբերությունների արտահայտման նպատակային չափի պահպանումն է, որին վերագրվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների պաշարը սովորողը ձեռք է բերում բնօրինակից պատկերագրելու փորձի հիման վրա: Անշուշտ կարևորելով ուսուցման տվյալ սկզբունքը դիզայնի հորինվածքի կազմակերպման գործընթացում՝ հարկ ենք համարում անդրադառնալ մի կարևոր հանգամանքի. նշված գործընթացի յուրաքանչյուր փուլ պետք է գործնական փորձարկումների ճանապարհով ենթարկվի արդյունավետության ապացուցմանը՝ կրթական համակարգի զարգացման տեսանկյունից: Մեր կողմից քննարկվելիք առարկայի համեմատաբար բարդ և ծավալուն ամբողջությունը, դասավանդման օրինաչափությունների ու սկզբունքների ուսումնասիրությունը բացահայտում են հանրապետությունում նրա ոչ համակարգված բնույթը, ի դեմս գոյություն ունեցող ուսումնական ծրագրերի, որոնք գլխավորապես հիմնված են դասախոսի անհատական, ոչ համակարգային մոտեցման վրա:

Որպեսզի դիզայնի հորինվածքի տեսագործնական գիտելիքների ուսուցումը դրվի ճիշտ ուղու վրա, անհրաժեշտ է համապատասխան գիտամանկավարժական սկզբունքների կիրառում, որի շնորհիվ միայն հնարավոր կլինի տվյալ դասընթացի արդյունավետ կազմակերպումը: Դրանցից մեկը ինտեգրատիվ մոտեցումն է:

Պետք է նշել, որ այսօր որոշ նկարիչ-մանկավարժներ դիզայնի հորինվածքի դասավանդման գործընթացում, զգալով ժամանակի տեղեկատվական տեխնոլոգիաների բարերար շունչը, ընդհանուր առմամբ կիրառում են նման բնույթի մոտեցումներ՝ սովորողներին առաջադրելով առաջադրանքը կատարել գրաֆիկական ինտերֆեյսի մշակման գործընթացի ուսուցման ինտեգրատիվ մոտեցման մեթոդիկայով և նախագծմամբ:

Ինտեգրացիան գիտությունների մոտեցման և կապի գործընթացն է, որը կատարվում է դիֆերենցիալի գործընթացների հետ միաժամանակ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի ծավալումն է և ուսուցման որակապես նոր մակարդակի վրա:

«Ինտեգրացիան» ուսուցման համակարգի հետ կապված կարող է ունենալ երկու նշանակություն՝ ուսուցանվողների մոտ շրջակա միջավայրի մասին ամբողջական պատկերաց-

ման ստեղծում, առարկայական գիտելիքների ընդհանուր հենահարթակի հայտնաբերում:

Դիզայնի ուսուցման ժամանակակից ծրագրի ստեղծումը ինտեգրատիվ գործունեություն է, որը ներառում է ստեղծագործական ունակությունների, գրաֆիկական գործունեության հմտությունների կիրառում և հատուկ գիտելիքների համակարգ, որոնք ներառում են կոգնիտիվ հոգեբանության, դասավանդման մեթոդիկայի մանկավարժության տեսակետները:

Ինտեգրացիան սահմանող ոչ պակաս կարևոր գործոն է նաև հենց ինքը՝ դիզայն դասընթացը, որը իր մշակման համար պահանջում է գեղարվեստական, գրաֆիկական, տեխնոլոգիական, գիտական և կիրառական ստեղծագործության փոխադարձ կապը: Ասվածից ելնելով՝ ապագա նկարիչ-մանկավարժին դիզայն դասընթացի մշակման գործընթացի ուսուցման համար սկզբունքայնորեն կարևոր է հիմնել այնպիսի ուսումնական առարկայախմբի գիտելիքների, կարողությունների, հմտությունների վրա, ինչպիսիք են գծանկարը, գեղանկարչությունը, կոմպոզիցիան, գրաֆիկան, դեկորատիվ արվեստը, ինֆորմատիկան, տեղեկատվական և համակարգչային գրաֆիկան: Առարկայախմբի մանկավարժական ինտեգրացիան հնարավորություն կտա գեղարվեստական կրթության ֆակուլտետի պայմաններում «Մանկավարժական դիզայնի դասընթացի դեկորատիվ գրաֆիկական ինտերֆեյս» ընտրությամբ ստեղծել բազա դիզայնի ժամանակակից ծրագրերի մշակման համար, որն իրենից ներկայացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների (համակարգչի) և ուսուցանվողի փոխներգործություն՝ ներառելով նաև էկրանային պատկերը և ուսուցման գործընթացի բոլոր գործողությունները:

Սակայն ժամանակակից մանկավարժական դիզայնի դասընթացի մշակման փորձը Հայաստանում ոչ շատ մեծ է: Այդ ուղղությամբ դեռևս առաջին քայլերն են արվում՝ հենվելով արդեն մշակված արտերկրի մասնագետների մեթոդների մշակումների վրա, այն է՝ կոմպոզիցիայի կազմման հիմնավորվածությունը, գունաշարի ընտրությունը, գրական տեքստի գեղարվեստական ձևակերպումը, գործառնական տարրերի ընտրությունը և ձևավորումը, էկրանի հորինվածքային որոշումները, պատկերագրվող նյութի ակնառությունը, դիզայնի դասընթացի համապատասխանությունը ուսուցանվողների տարիքային առանձնահատկություններին:

Գոյություն ունեցող «Մանկավարժական դիզայն» դասընթացի վերլուծման արդյունքում պետք է նկատել, որ ընդհանուր առմամբ մանկավարժական տեսանկյան դրսևորման մակարդակը բավականին ցածր է: «Դիզայն» դասընթացի (ավանդական) մշակման բնորոշ խնդրահարույց տեսանկյուն է գունային ձևավորումը, որը հիմնականում խոչընդոտում, ոչ թե նպաստում է ուսումնական նյութի ակնառությանը, քանի որ իրագործված է ներդաշնակ գունային աղյուսակների կառուցման սկզբունքների խախտմամբ և առանց հաշվի առնելու ուսուցանվողի վրա գույնի հոգեբանական ազդեցությունը: Դրա հետ մեկտեղ կառավարման միջոցները և դրանց գրաֆիկական ձևավորումները նույնպես ստեղծողների կողմից առավել հստակ և արհեստավարժ գործողությունների կարիք ունեն:

Կարելի է արձանագրել նաև չհաջողված հորինվածքային լուծումներ, ինչը տեղիք է տալիս մտածելու մշակման բաց թողնված տեխնոլոգիական փուլերի մասին, օրինակ՝ դասընթացի կառուցման ընդհանուր մոդելը, ինչպես նաև պատկերագրող նյութի առկայությունը համեմատած նախորդ չափանիշների հետ ավելի քիչ հարցեր են առաջացնում: Սակայն հաճախ հանդիպող հայեցակարգի նմուշօրինակների որակ կարելի է անվանել դրանց ձևակառուցությունը և համակողմանիությունը, որը համարվում է դասընթացի ծրագրի արդյունավետության հաստատուն և ոչ բարձր մակարդակի գրավական:

Ընդհանուր առմամբ ուսումնական նյութը, կառավարման միջոցները, ձևավորման ուճաբանությունը և այլն իրագործվել էին միմյանց հետ փոխգործակցված, ինչը և արտա-

հայտվել է ուսուցանվողների տարիքային խմբի համապատասխանելիության չափանիշի համեմատաբար բարձր ցուցանիշով:

Այդ դասընթացների բերված վերլուծությունը հիմք է տալիս հաստատելու, որ անհրաժեշտ է իրականացնել դրա գրաֆիկական ինտերֆեյսի հատուկ նախագծում արհեստավարժ նկարիչ-մանկավարժների կողմից, որոնք ընդունակ են մշակել հարմար, արդյունավետ դիզայներական գործունեության մեթոդապես մշակված ծրագրեր:

Ուսումնասիրության մեջ մենք քննարկում ենք համակարգչային դիզայնի ինտերֆեյսի գործիքային ալգորիթմական եղանակները և միջոցները մանկավարժական տեխնոլոգիաների համատեքստում: Դրա հետ մեկտեղ նկարիչ մանկավարժներին դիզայնի դասընթացի մշակման գործընթացի ուսուցման գործիքային ալգորիթմական մանկավարժական եղանակների ու միջոցների մշակման ժամանակ մենք հաշվի ենք առել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում կրթական գործընթացների մոդելավորման և նախագծման հիմնական դիզայնիկական մոտեցումները: Այստեղ կենտրոնական տեղ են զբաղեցնում կիրառվող ինտերֆեյսերի դիզայնի եղանակները՝ որպես նոր և համակողմանիության միջոցի:

Ինտեգրատիվ մոտեցման նախագծման գլխավոր պայման է ապագա նկարիչ-մանկավարժի հոգեբանական և անձնական բնութագրիչների հաշվառումը, նրանց հետաքրքրությունը մասնագիտության հանդեպ (մասնագիտական ուղղվածություն), մանկավարժական պատրաստվածության որակը, մշտական սեփական ուսումնական գործունեության վերահսկողությունը:

Մեթոդները

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները. հետազոտությունների և մանկավարժական առաջավոր փորձի տեսական վերլուծման և ընդհանրացման մեթոդներ, էմպիրիկ՝ դիտարկում, ուսանողների անկետավորում, թեստավորում, հարցում (հայտորոշիչ և ստուգիչ), փորձարարական ուսուցում, մոդելավորում: Վիճակագրական՝ թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների քանակական և որակական տվյալների մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն:

Դիզայնի դասընթացի գրաֆիկական ինտերֆեյսի մշակման ուսուցման գործընթացի նախագծման համար անց է կացվել ուսանողների գիտելիքների և կարողությունների վերլուծություն, որոնք նրանք ստացել են հատուկ մասնագիտական առարկաների (գծանկար, գեղանկար, կոմպոզիցիա, տեղեկատվական և համակարգչային գրաֆիկա, դեկորատիվ արվեստ և այլն) ուսումնասիրման ժամանակ: Դրա հետ մեկտեղ պետք է իրականացվեն հարաբերությունների այնպիսի համակարգեր, ինչպիսիք են «դասախոս-ուսանող», «համակարգիչ-ուսանող», «ուսանող-ուսանող»:

Հարաբերությունների տվյալ համակարգերի առանձնահատկությունը մի կողմից համակարգչի՝ որպես ուսուցման գործիքի համապատասխանորեն ընկալելն է, մյուս կողմից ուսուցանող միջավայրի: Ընդ որում, գրաֆիկական ինտերֆեյսի տեսության և պրակտիկայի հարցերը պետք է լուծվեն միասնականորեն (համալիր)՝ ստացված գիտելիքները էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների մշակման գործընթացում զարգացնելով ուսանողների կարողությունները: Այս ամենին կարելի է հասնել՝ կիրառելով ծրագրային նյութի ուսուցման հաջորդականության սկզբունքը, սկսած ուսուցանվող դասընթացի բաժինների մասին ընդհանուր տեղեկություններից՝ ուսանողի գործունեության և ստեղծագործական կարողությունների դրսևորմամբ տարբեր խնդիրների լուծման պրակտիկայի միջով: Մեր կարծիքով, ինտեգրատիվ մոտեցումը պետք է նպաստի ուսանողներին դիզայնի ուսուցմանը նախապատրաստելուն:

Եզրակացություն

Տեսական ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալները թույլ են տալիս ձևակերպել հոդվածից բխող հետևյալ հետևությունները.

- Տեսականորեն հիմնավորվել և հետագոտվել են ուսանողների գեղարվեստատեխնիկական իմացության խնդիրները դիզայն առարկայի ուսուցման գործընթացում:

- բուհում «Դիզայնի» ուսուցումը պետք է դարձնել նպատակային: Այդ նպատակով փորձ է արվել մշակել համապատասխան մեթոդական համակարգ.

- Մանկավարժական գործընթացում խորացվել են տեղեկատվական տեխնոլոգիա հասկացության տեսական և գործնական ուսուցման գործընթացները:

- Հիմնավորվել է մանկավարժական պայմանների այն համակարգը, որը գրաֆիկական դիզայնի ուսուցման գործընթացում ապահովում է բուհական կրթության արդյունավետությունը և զարգացնող գործառնությունը:

- Հիմնավորված է նկարիչ-մանկավարժի համալսարանական կրթության համակարգում դիզայն առարկայի ուսուցման հոգեբանամանկավարժական գործընթացը, որի համար ներկայացված են ապագա մասնագետին անհրաժեշտ վերամշակված և ամբողջական մեթոդական համակարգը, դրա տեխնոլոգիական ապահովման նմուշօրինակը, ստեղծագործական գործունեության համար բուհական ծրագիր-առաջադրանքները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-284>

Գրականություն

1. Моторин А. В., Орлова Г. А., Копытцева Н. М. и др. На рубеже веков: взгляд в будущее. 2001, вып 1., с. 18.
2. Неменский Б. М. Мудрость красоты. Москва, 1981, с. 81.
3. Романычева Э. Т., Яцюк О. К. Дизайн и реклама. Компьютерные технологии: справочное и практическое руководство. Москва, ДМК пресс, 2002, с. 18.
4. Серов С. И. Гармония классической типографики. Москва, 2003, с. 23.
5. Якобсон П. М. Психология художественного восприятия. Москва, Искусство, 1964, 186 с.

Предмет дизайна в системе университетского образования художника-педагога

Меликсетян Гор

Резюме

Ключевые слова: художественное образование, профессиональное, междисциплинарное, образовательные программы, эргономика, компьютерный дизайн, композиционная методика, исследования

В статье теоретически обсуждается и анализируется современное состояние художественного образования, включая как положительные, так и отрицательные аспекты. Профессия дизайнера, являющаяся важной сферой деятельности, тесно связанной с повседневной жизнью, трудом и творческими наклонностями, по педагогическим и психологическим соображениям должна быть интегрирована в систему общего и профессионального образования. Основная проблема, цель и новизна статьи заключаются в пересмотре системы университетского образования художника-педагога с внедрением современных технологий, методик и практик, ориентированных на интересы, потребности и запросы общества. Особое внимание уделяется интеграции компьютерного дизайна, эргономики, композиционных методик и междисциплинарного подхода, что позволяет формировать у студентов комплексное художественное мышление, готовность к инновационной деятельности и способность к исследовательской работе. Предлагаемые изменения способствуют развитию творческих и профессиональных компетенций будущих педагогов-художников, обеспечивая их конкурентоспособность и актуальность подготовки в современном образовательном, культурном и технологическом пространстве.

The Subject of Design in the System of University Education of the Artist-Pedagogue

Meliksetyan Gor

Summary

Key words: art education, professional, interdisciplinary, educational programs, ergonomics, computer design, compositional methodology, research

The article theoretically discusses and analyzes the current state of art education, considering both positive achievements and existing challenges. The profession of designer, as an essential field of activity closely connected with daily life, work, and creative inclinations, should be integrated into general and professional education due to pedagogical and psychological considerations. The main problem, objective, and novelty of this study lie in revising the university education system for artist-pedagogues, introducing modern technologies, methods, and interdisciplinary approaches aligned with the interests, needs, and demands of contemporary society. Special attention is given to incorporating computer design, ergonomics, and compositional methodology, fostering comprehensive artistic thinking, creative research skills, and innovative competence in students. The article emphasizes the necessity of adapting program content to modern aesthetic perceptions and practical design applications. These updates aim to enhance the professional and creative competencies of future artist-pedagogues, ensuring their relevance, adaptability, and competitiveness in the rapidly evolving educational, cultural, and technological environment.

Ներկայացվել է 08. 11. 2025 թ.

Գրախոսվել է 10. 12. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.